ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2019-2-1-Ա

ք. Երևան 23.05.2019թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2019 թվականի մայիսի 23-ի նիստում քննարկեց 2019 թվականի մայիսի 3-ին արտոնագրային հավատարմատար Արա Խզմալյանի կողմից ներկայացված՝ Vivaro Limited (Triq Il-Lumija 8, San Gwann SNG 2621, MT) «CHINGACHOONG» (IR1368868) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փոր ձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ կետերի և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 93-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը չունի տարբերակիչ հատկություն և բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից, որոնք առևտրում ծառայում են ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցման ժամանակը, ապրանքի կամ ծառայության տեսակը, որակը, քանակը, ստեղծման նպատակը, արժեքը, աշխարհագրական ծագումը կամ այլ բնութագրերը նշելու համար: Տվյալ դեպքում հայտարկված ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման, քանի որ բացառապես բաղկացած է «CHINGACHOONG» գրառումից, որը հանդիսանում է հասարակությանը քաջ հայտնի խաղի անվանում, ունի նկարագրական բնույթ՝ նշելով հայտարկված ապրանքների և ծառայությունների տեսակը, ստեղծման նպատակը, և որը օրինաչափ ձևով կարող է օգտագործվել բոլորի կողմից:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մասնակի բավարարելու, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանի հայտով գործավարությունը շարունակելու վերաբերյալ, քանի որ

որոշումն ամբողջությամբ հիմնավորված չէ և հաշվի չեն առնված «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի որոշ դրույթներ, որոնք վերաբերում են շփոթելու աստիճան նման ավելի վաղ գրանցման ներկայացված ապրանքային նշանին, որի գրանցումը մերժելու մասին որոշման վիճարկման հնարավորությունները սպառված չեն:

Բողոքարկողը համաձայն էր կոլեգիայի կարծիքի հետ:

Փորձաքննության բաժնի պետը նույնպես համաձայն էր կոլեգիայի առաջարկի հետ:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Բողոքը մասնակի բավարարել, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչել և «CHINGACHOONG» (IR1368868) ապրանքային նշանի հայտով գործավարությունը շարունակել:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆ